Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1 նոյեմբեր 2023թ. ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի պ/կ Մովսես Վարդանյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-159/23» ծածկագրով գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Սույն թվականի հոկտեմբերի 13-ին «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-159/23» ծածկագրով գնման ընթացակարգ, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ն:

Համաձայն էլեկտրոնային աճուրդով ներկայացված գնային առաջարկների՝ «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ն թիվ 1, 2, 3 և 4 չափաբաժիններով ներկայացրել է ամենացածր գնային առաջարկները: Հայտերի գնահատման փուլում, ս/թ հոկտեմբերի 25-ին, «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ հակադարձ աճուրդի ժամանակ 1-ին չափաբաժնի (կոստյում, 595 լրակազմ) գնային առաջարկը ներկայացնելուց տեղի է ունեցել վրիպակ, որի արդյունքում գնային առաջարկը ներկայացվել է մեկ զրո պակաս 9,900,000 դրամի փոխարեն գնառաջարկ է ներկայացվել 990,000 ՀՀ դրամ և հրաժարվում է մրցույթի 1-ին չափաբաժնով հետագա մասնակցությունից:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) ենթակետը՝ **որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից,** գնման ընթացակարգը թիվ 1 չափաբաժնով հայտարարվել է չկայացած:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու հաջորդող օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցին՝ «Գայանե Խաչատրյան» ԱՁ-ին:

Գլխավոր տնօրենի պ/կ **Մ. Վարդանյան**